ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2024 թվականի թիվ 50-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԵԴԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով «ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ընկերության՝ Վեդի քաղաքում հատկացված 89.3 ՄՀց հաճախականությունը փոխելու վերաբերյալ 2024 թվականի մարտի 21-ի, ապրիլի 1-ի և մայիսի 8-ի դիմումները, ինչպես նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի ապրիլի 10-ի N 01/11.1/3338-2024 գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց***՝

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 50-Ա որոշմամբ «ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ընկերությանը Վեդի քաղաքում հատկացված 89.3 ՄՀց հաճախականությունը փոխարինել 96.7 ՄՀց հաճախականությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. մայիսի 23
ք. Երևան